ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ

Հռոմ

Ձերդ Սրբության ութսուն տարիների լրումին գոհություն ենք տալիս բարյաց պարգևատու Աստծուն, որ Ձեր հովվապետական առաքելության ճանապարհին մնաց միշտ Ձեզ օգնական ու հզորիչ, հառնվել ճառագայթում Քրիստոսի Ավետարանի լույսին մեր օրերի աշխարհում:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու շնորհավորում ենք Ձեզ և աղոթում Մեր սրտի բովանդակ ջերմությամբ, որ Տերը Ձերդ Սրբությանը պարգևի ևս բազում տարիներ լի լուսավոր իրագործումներով՝ ի մխիթարություն աշխարհի բոլոր քրիստոնյաների և բոլոր բարի կամքի տեր մարդկանց:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 հոկտեմբեր 1977 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Մեր տարեդարձի առթիվ Ձեր հղած մաղթանքների համար խորապես զգացված՝ սրտանց շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, հատկապես Մեր առաքելության ճանապարհին Ձեր աղոթքի համար:

Թող Տերը մեզ տա շնորհը բոլոր քրիստոնյաների կատարյալ միության, արդար և խաղաղ մի աշխարհում:

Մնում ենք աղոթող Ձերդ Սրբության և ձեր ժողովրդի համար:

ՊԱՊ ՊՈՂՈՍ Զ

Վատիկան,
29 հոկտեմբեր 1977 թ.